ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ն. Լ. ՄԱՆԿՈՒՆԻ

(Միչիգան. ԱՄՆ)

Ամերիկահայ գաղթականության պատմությունը կարելի է բաժնել երկու մասի։ Առաջին շրջանը կսկսի XVII դարու սկիզբին և կտևե մինչև 1890 թ.։ Այդ ժամանակամիջոցին հայ պանդուխտներու թիվը եղած է սահմանափակ, մոտավորապես 1800—2000-ի միջև։ Երկրորդ շրջանը կսկսի 1890 թ.։

1895 թ. սուլթան Աբդուլ Համիդի օրոք, Շաքիր փաշայի զինվորական հանձնախմբի միջոցով սարքված հայկական մեծ կոտորածները, ապա Կիլիկիո եղեռնը, Երիտասարդ թուրքերու և գերման պետական խորհուրդի աջակցությամբ կազմակերպված թուրքահայերու ջարդերն ու տեղահանությունները ոչ միայն ամայացուցին ամբողջ Թուրքահայաստանը, այլև մեծ թափ տվին հայերու գաղթին դեպի Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Կանադա, Ֆրանսիա և այլուր։

XVII դարեն սկսած՝ Արևմտյան Եվրոպայեն Նոր Աշխարհը խուժող միջազգային ամեն կարգի գաղթական աշխատավորներու գրեթե կեսը, պրոֆ. Քոմընսի տված տեղեկության համաձայն, բաղկացած էր «պայմանագրված սպասավորներե»։ Նկատելի է, որ հայ գաղթականները առաջին օրերեն իսկ Ամերիկա մեկնած չեն իբրև «պայմանագրված սպասավորներ» կամ «պայմանագրված գործավորներ»։ Բոլորն ալ վճարած են իրենց նավային փոխադրության և հարակից ծախսերը։ Անոնք բաղկացած էին ճարտարվեստի վարպետներե, արհեստավորներե, արվեստագետներե, մտավորականներե, խմբագրողներե, ուսանողներե, վաճառականներե և աշխատավորներե։ Թվով փոքր, բայց իբրև որակավոր աշխատողներ, առաջին օրերեն անոնք լծած էին իրենց ջանքերն ու կարողությունները ամերիկյան ճարտարվեստին ու արհեստներուն աճում տալու։

* * *

*Հավանաբար Ամերիկա գաղթող առաջին հայը 1610—1612 թթ. միջև եղած է Անգլիա, Պոլոնիա, Հոլանդիա կամ Ֆրանսիա հաստատված «Հայ Մարտինը»—*Martin the Armenian *և կամ Հովհաննես Մարտիկյան կամ Մարտիրոսյան[1]։ Ան կը կոչվեր Հայ Մարտին անունով և կը նկատվեր Լոնդոնի Ջեյմսթաուն գաղութի անդամներեն մին։ Վիրջինիայի ընկերության արձանա-*

[1] *Այս թվականներեն շատ առաջ հայեր գաղթած էին Իտալիա, Ֆրանսիա, Պոլոնիա, Հոլանդիա, Հնդկաստան, Անգլիա և այլուր։*

գրությունները ցույց կուտան, որ կապիտան Ջոն Մարտինը ճանաչված է 1621 թ. փաստաթղթի մեջ իբրև բնիկ հայաստանցի մը, և 1618 թ. ան ցուցակագրված է իբրև հողատեր և նշված է, որ ան ուներ 95 ակր հող[2]։ Իսկ Վիրջինիայի «Լոնդոն» ընկերության արձանագրություններուն մեջ հիշված է, որ այս Ջոն Մարտինը բնիկ հայաստանցի մը՝ կապիտան Արկոլի սպասավոր՝ եղած է 1621 թ.[3]։

Հայ Մարտինին Ամերիկա գաղթելու պատճառներն անստույգ են։

Այնուհետև պատմական տեղեկություններու համաձայն 1653—1654 թթ. Ամերիկա կը ժամանին երկու վարպետ շերամարույծ հայեր, որոնց կարողության տեր անգլիացի մը, սըր Էդուարդ Տիկս անունով, իր անձնական ծախսովը Թուրքիայեն բերել կուտա՝ Վիրջինիայում շերամարուծության իր նոր ձեռնարկին վրա հսկելու։ Վիրջինիայի նորահաստատ իշխանությունը և կարևոր անձեր, Լոնդոնի շարք մը ձեռնարկուներու և կարողության տեր մարդոց հետ, Տիկսի այս ձեռնարկով լրջորեն հետաքրքրված էին։ Լոնդոնեն հրահանգված էր Վիրջինիայի խորհուրդին, որ միայն խորհուրդի անդամները և ուրիշ հարյուր անձինք մետաքս հագնելու իրավունք պետք է ունենան։ «Եթե հավատը ընծայենք զեկուցումին,—կրսե Էդուարդ Էգլսթըն,—Վիրջինիան մատակարարեց Չարլզ Ա-ի թագադրության պատմուճանը։ Իսկ Չարլզ Բ-ի մետաքսազգեստը անտարակույս իր Վիրջինիայի տիրապետության մեջ մշակված խոզակներեն պատրաստված էին։ Տիկս անունով պարոն մը հայեր բերել տվավ Վիրջինիայի իր խոզակի արտադրության հսկելու»[4]։

Տիկս իր մետաքսի արտադրության փորձը կը կատարեր Դենրիգի շրջակայքը, Ջեյմս գետի շուրջը, նաև Բելֆիլդ, այսօրվան Ուլիմսբերգի մոտերը, ուր ան տնկել տված էր թթենիի բազմաթիվ ծառեր։ Երկու հայ վարպետ մետաքսամշակները այս տնկամշակության աճումին հոգ կը տանեին և կը հայտնեին հետաքրքրվողներուն, որ խոզակները սիրահար են թթենու տերևներուն։

Վիրջինիայի խորհուրդը կը խթանե մետաքսի արտադրության մրցակցությունը և ավելի դյուրին պայմաններ կառաջարկե. 50 ֆունտ արտադրողին կը խոստանա ծխախոտի իր առատ պարկները։ Սակայն բոլոր խոստացված նվերներն այլ վերջիվերջո ցայտուն արդյունք մը ցույց չեն տար.

«Հակառակ Վիրջինիայի մետաքսի մշակության այս գրավիչ ջատագովության և ոգևորիչ հույսին,—կրսե Ֆիլիպ Ալեքսանդր Պրյուս,—և հակառակ անոր, որ Տիկս և ուրիշ հարուստ ու ազդեցիկ քաղաքացիներ կանգնած էին այս ձեռնարկին ետև, կը թվի թե որևէ իրական առաջադիմություն տեղի չունեցավ, և որպեսզի հայ Ջորջը (Գևորգ) գաղութին մեջ մնա և նվիրվի մետաքսի մշակության, իրեն 4000 ֆունտ ծխախոտ նվեր տվին»[5]։

Հին դարերուն գաղթող հայերը արձանագրված չեն իրենց պետական երկրներու անուններով։ Ամերիկայի Միացյալ Նահանգները 1820 թ. սկսած է Ամերիկա գաղթողներուն համար ուրույն վիճակագրություն պահել, և բոլոր ներգաղթողներն ու արտագաղթողներն արձանագրված են իրենց պետական ազգերու և ցեղերու անուններով։

[2] „The Record of Verginia Company of London", հատ. 3, էջ 86։
[3] Նույն տեղում, էջ 433։
[4] Eduard Eggleston, The Bigginers of a Nation, էջ 78։
[5] Philip Alexander Bruce, The Economic History of Virginia, էջ 365—366։
[6] Տե՛ս Eduard Eggleston, The History of Statistics of United States.

Այս առաջին շրջանի հայերն եղած են շերամի փորձառու վարպետներ և մշակողներ, արհեստավորներ, արվեստագետներ, լրագրողներ, մտավորականներ, ուսանողներ, աշխատավորներ, վաճառականներ և այլն, որոնք մեկնած են մեծ մասամբ Թուրքիո ծովեզրյա քաղաքներեն։ Սակայն այդ շրջանին որոշ թվով հայեր ալ պանդխտած են Հայաստանի ներքնագավառներեն՝ Խարբերդեն, Սեբաստիայեն, Մալաթիայեն, Մարզվանեն, Կյուրինեն, Կեսարիայեն, Տիգրանակերտեն, ինչպես և Կիլիկիո շրջաններեն՝ Մարաշեն, Այնթապեն և այլն։

Նոր Աշխարհը խուժող Եվրոպայի հարավ-արևելյան ժողովուրդներու հոսանքեն բացի, որուն ալիքները կհասնեին Փոքր Ասիո ժողովուրդներուն, հետաքրքրական առնչություն մ'ալ գոյություն ունեցած է Թուրքիա հաստատված ամերիկյան միսիոներներու և պանդխտող հայերու միջև։ 1819 թ. առաջ ամերիկյան միսիոներները նախ հաստատված են Բեյրութ, Ըզմիր և Պոլիս։ Հետո շփման դալով թուրքահայերու հետ, անոնց մեջ հետաքրքրություն և փափագ արծարծած են Ամերիկա մեկնելու, բարձրագույն ուսման հետևելու և վերադառնալու Թուրքիա։ 1850 թ. հետո բավական թվով հայ ուսանողներ կը մեկնին Ամերիկա։

1834—1835 թթ. Խաչատուր Ոսկանյան, ընիկ պոլսեցի, ժամանած է Նյու Յորք։ 1840 թ. վերադառնալով Կ. Պոլիս, ժամանակ մը խմբագրած է «Բյուզանդիոն Աղդարարը»։ 1854 թ. կրկին վերադարձած է Ամերիկա. Ճանապարհին ծանոթանալով «Նյու Յորք Հերալդ» թերթի խմբագրին հետ, դարձած է այդ թերթին աշխատակիցներեն մին, հայերու և թուրքերու մասին շատ մը հոդվածներ դրած է և հայը որակած է «Փոքր Ասիո յանկի» անունով։ Այնուհետև Ամերիկան հայերուն ծանոթացնելու համար «Հայ տղա» ծածկանունով հոդվածներ դրած է «Մասիսին»։ Ոսկանյան բազմերանդ երևակայության տեր և նորանոր խորհուրդներ հղացող և պաշտոններ հետապնդող անձ մը եղած է։ Ժամանակ մ'ալ Նյու Յորքի մաքսատան մեջ պաշտոնավարած է։ Հետո Կոլումբիա համալսարանի իրավաբանության դրադարանին վարիչ կարգված է։ Ատեն մ'ալ թուրքական հյուպատոսի պաշտոն վարած է և եղած է «Նյու Յորք մամուլի կլուրին» դործոն անդամներեն մին, ատեն մ'ալ անոր նախագահը։

Հին դաղթականներեն է նաև Թոփհանեյան, որ դրած է շարք մը հոդվածներ Պոլսի «Մանդումեի» մեջ՝ քաջալերելով հայերու դաղթը դեպի Ամերիկա։ Թոփհանեյան, Պոլիս վերադարձին, կովկասահայ Մանդասարյանի հետ կը ծրագրեն ստվար թվով հայ դաղթականություն մը փոխադրել Ամերիկա։ Այս առթիվ կը դրեն Ոսկանյանին, որը իրենց կը տեղեկագրե ամերիկյան կառավարության հայ դաղթականներուն համար կատարելիք օժանդակության քանակի մասին։ Ոսկանյան իր տեղեկագրին կը կցե նաև Ամերիկայի մեջ Նոր Անի անունով հայկական բաղաքապետություն մը հիմնելու ծրագիր-հատակագիծ։ Նոր Անիի փողոցները արևելքեն-արևմուտք պիտի կոչվին Վան, Մուշ, Զեյթուն, Կարին, իսկ հյուսիսեն-հարավ երկարողները՝ Ոսկանյան, Թոփհանեյան, Մանդասարյան և այլն։ Ոսկանյանին կաջակցեր Նյույորքցի եկեղեցական դոկտ. Քրոսբին։ Քաղաքապետության նախաձեռնողները, սակայն, անդոհացուցիչ նկատելով ամերիկյան կառավարության օժանդակությունը, այդ ծրագիրը երեսի վրա կը թողուն։

1840 թ. հետո ամերիկահայ դաղթականության թափը կաճի։ Նույն թվականին Ամերիկա կը մեկնի Հարություն Վարժապետյան։ Աստվածաբանական Միության կոլեջը ավարտելե հետո, ան կը վերադառնա հայրենիք և կընտրվի

Երուսաղեմի հայոց պատրիարք[7]։ Դարձյալ՝ 1842 թ. ամերիկյան միսիոներության օժանդակությամբ Ամերիկա կը ժամանեն Հովհաննես Տեր Սահակյան և Քրիստաֆոր Սահակյան։ Ասոնցմե առաջինը կուսանի Աստվածաբանական Միության կոլեջը, հետո Եյլի և Էնդովերի համալսարանները և 1848 թ. Պոլիս վերադառնալով կը պարապի բողոքական քարոզիչի պաշտոնով, իսկ Քրիստաֆորը կը հետևի Եյլի համալսարանի գիտական ճյուղերուն։ Քրիստաֆոր Սահակյանին կը վերագրվի ամերիկյան կանաչ դոլարի գյուտը։ 1845 թ. Ամերիկա կը ժամանի Սերոբ Ալիշան՝ Ղևոնդ Ալիշանի եղբայրը և կապրի Վաշինգտոնի մեջ։ 1848—1850 թթ. Ամերիկա կը մեկնի Սարգիս Խաչատուրյան, ան կավարտե Բոստոնի ատամնարուժական վարժարանը և Պոլիս վերադառնալով կը բանա իր ատամնարուժարանը։ 1857 թ. Ամերիկա կը մեկնին հինգ հայ ուսանողներ ևս. ասոնք շարք մը դժվարություններե հետո բժշկություն կուսանին։ Ասոնցմե գոկտորներ Սիմոն Մինասյան, Պարոնիկ Մատթեոսյան և Կարապետ Բալուստյան ամերիկյան քաղաքացիական պատերազմի ընթացքին կը ծառայեն Հյուսիսի միացյալ բանակին։ Հյուսիսի միացյալ բանակի մեջ իրրև զինվոր կը ծառայեն նաև Պոլսի խասգյուղցի Արմենակը, զմյուռնացի Նարինյանը, Զորա Թաթեոսյանը և դեղագործ Խաչատուր Կարապետյանը։ 1868 թ. Ամերիկա կը մեկնի եռչկաթցի Մարդար Տատրյան և բժշկություն կուսանի։ Հին գաղթականներեն է պրոֆ. Պեղճյանը։ Ան ավարտելով Եյլի համալսարանը վերադարձած է հայրենիք և Այնթապի ամերիկյան կենտրոնական կոլեջին գիտական ճյուղերուն պրոֆեսոր ընտրված է և այդ հաստատության աշխատողներե՛ մին եղած է։

Այս շրջանին ամերիկյան միսիոներներու միջոցով Ամերիկա կը դրկվին նաև վեց-յոթը հայ աղջիկներ՝ կրթություն ստանալու։ Ասոնցմե մին բժշկություն կուսանի և Դետրոյտի մեջ կը պարապի բժշկությամբ։

1854 թ. Նյու Յորք կը մեկնի Թաթեոսյան անունով մեկը։ 1850 թ. Ամերիկա կը ժամանե Պ. Հ. Պալյան, որը Օլբենիի և Բոստոնի մեջ ամերիկյան հացագործության արհեստը կը սորվի։ Պոլիս վերադարձին Պալյան, իբրև «վարոլետ հացթուխ», Սայրուս Համլինի հանձնարարությամբ Ղրիմի պատերազմին կը ծառայե անգլիական բանակին[8]։ Հակոբ Պոյաճյան այս թվականներուն կը մեկնի Ամերիկա և տպագրական արհեստը կը սորվի, իսկ Ալեքսան Աստվածատուրյան՝ ձուլելու, Պետրոս Հարությունյան՝ ջերմոց շինելու արհեստները։ Ասոնք հետո կը վերադառնան Պոլիս։ 1871 թ. Ամերիկա կը մեկնի Ալեքսանդր Զինոր և իրը գծագրիչ կաշխատի «Դեյլի գրաֆիկ» լրագրին, հետո Նյու Յորքի մեջ կը բանա գծագրչի և նկարչի իր արհեստանոցը։ Ամերիկա գաղթող գծագրիչներեն մեկն է նաև Տելեմակ-Մեսրոպ Էքսերճյան. ան եղած է նաև վարպետ Ալեքսանդր Զինորի։ Էքսերճյան մեռած է Նյու Յորքի մեջ, իր գործը թողլով իր եղբորը՝ Գառնիկ Էքսերճյանի։

Մշեցի Մելքոն Մարգարյանի հավաստումներուն համաձայն, մինչև 1891 թ. սկիզբները միայն «69 հայեր կը գտնվեին Ամերիկայի մեջ»[9]։ Եկվոր հայերը առհասարակ կը դիմեին Մարգարյանի գործատեղին, որը կը կոչվեր «հայոց պատրիարքարան»։

---

[7] Մուշեղ Սերոբյան, Ամերիկահայ տարեցույց, 1912։

[8] Տե՛ս Cyrus Hamlin, My Life and Times.

[9] Մարգարյանի թվական այս տեղեկությունները անստույգ կը նկատվին.—Ն. Լ. Մ..

Նյույորքաբնակ հայերը նկատելով, որ հայ պանդուխտներու թիվը հետզհետե Նյու Յորքի մեջ կը ստվարանա, և թե նորեկները շրջապատին և անդլերեն լեզվին անծանոթ ըլլալով կենթարկվին նեղություններու և նյութական անձկության, «ընկերություն» մը կը կազմեն՝ նպատակ ունենալով նյութապես և բարոյապես օժանդակելու նորեկներուն[10]։

Հայ առևտրականներ կը հաստատվին Նյու Յորք, Ֆիլատելֆիա, Դետրոյտ, Կլիվլենդ, Չիկագո, Սենտ-Լուիս, Բոստոն և այլ քաղաքներուն մեջ։ Հին առևտրականներ կը նկատվին Իսկյան եղբայրները, որոնք արևելյան ապրանքներ կը ներմուծեին Ամերիկա և ամերիկյան ապրանքներ՝ Թուրքիա։ Ամերիկայի քաղաքացիական պատերազմեն հետո, Իսկյան եղբայրները կը մատնվին տնտեսական ծանր տագնապի և կը սկսին ջուլհակությամբ պարապել։ Բայց անկարող ըլլալով զրկանքներուն տոկալ՝ երկիր կը վերադառնան։ Հետագային անոնք նորեն կը վերադառնան Ամերիկա[11]։

1878 թ. Ազարիա Պողոսյան (խարբերդցի) Եփրատ կոլեջն ավարտելե հետո կը մեկնի Միացյալ Նահանգներ։ Ամերիկացիներու օգնությամբ կուսանի Թեննեսի նահանգի Մկրտչական կրոնական կոլեջը։ Քանի մը տարի հետո կը վերադառնա Խարբերդ և Ամերիկայի Մկրտչական միսիոներական ընկերության օժանդակությամբ կը ձեռնարկե Մեղրե քաղաքին մեջ Մկրտչական եկեղեցի մը հիմնել։ Այս միջոցին նախապես Խարբերդ քաղաքի մեջ հաստատված հայ ավետարանական միսիոներական ընկերության և Պողոսյանի Մկրտչական եկեղեցվո միջև լուրջ ընդհարումներ կը սկսին։ Առաջինները չեն փափաղիր, որ ամերիկյան ուրիշ մրցակից միսիոներություն մ'ալ հաստատվի Խարբերդի մեջ։ Պատվելի Ազարիա Պողոսյան հայերեն լեզվին ծանոթ և սահուն խոսող մը՝ կրնար նորահաստատ հայ ավետարանական միսիոներական ընկերությանը լրջորեն վնասել։ Սակայն պատվելի Ազարիա Պողոսյան հազիվ ժողովարանը լրացուցած՝ կը հիվանդանա և կը մեռնի[12]։ Հայ ավետարանական ժողովարանն ալ այդ վեճերեն կազատվի։

1879 թ. հին Մալաթիայեն Ամերիկա դաղթած առաջին հայերը՝ Գարրիել Պաղտոյան և Հակոբ Մուրատյան, ինչպես նաև հետագա տարիներուն դաղթողները դիմած են Ուստր քաղաքը և այնտեղ հաստատված[13]։

Դարձյալ 1878—1880-ին ուստրաբնակ հայ եկվոր կը նկատվի Ահարոն Էնովքյան (խարբերդցի), որ աշխատած է նույն քաղաքի երկաթաթելի գործարանը։ Այնուհետև Խարբերդեն դաղթած են Գեորգ Ճախալյան (Եփրատ կոլեջի սաներեն), Հովհաննես Յաղճյան, Կարապետ Թաշճյան, Մինաս Արոյան և ուրիշներ։

Դոկտ. Այվազյան, նախկին դպրթականներեն մին, կը գրե. «Ութսունական թվականներուն Միացյալ Նահանգաց մեջ հայերու ամբողջական թիվը չէր ավելի, քան 500։ Զափազանց փոքր թիվ մը և ցիրուցան..., 1885-ին Ամերիկայի մեջ հայերու թիվն սկսած էր ստվարանալ և հայկական փոքր դաղութներ երևան կուգային Նյու Յորք քաղաքին մեջ, Նյու Յորքի հանդիպակաց Հուդզոն գետի արևմտյան ափանց վրա, Ջերսի քաղաքի բարձանց վրա, և Մասա-

[10] Տե՛ս Մ ա ն ո ւ շ ա ղ Ա ն ա ն ի ա ն, Ամերիկահայ տարեցույց, 1912։

[11] Այս տեղեկությունները ինձի հայտնած է Իսկյան եղբայրներու կրտսերը, որ մեռավ Նյու Յորքում։

[12] Այս տեղեկությունները ինձի հաղորդած է Ազարիա Պողոսյանի որդին՝ Պոլ Պողոսյան, որ այժմ ընտանիքով կը բնակի Դետրոյտ քաղաքի մեջ։

[13] «Լրաբեր», 1951, 6 հոկտ.։

չուզետս նահանգի Բոստոն, Ուստր և այլ մի քանի փոքր քաղաքներուն մեջ։ Նյու Յորքի հայերուն թիվը 150-ի հասնիվ կը հասներ, իսկ Ջերսի քաղաքի բարձանց վրա կային իրրև երկու տասնյակ հայեր, մեծ մասամբ տիգրանակերտցի ուստայնանկներ, որ մետաքսի գործարաններուն մեջ կաշխատեին։ Հայերեն շատեր անտեղյակ էին երկրին սովորությանց և լեզվին. պանդուխտներ օտար երկրի մեջ, առանց բարեկամի, հայերեն խոսելու և հայու երես տեսնելու կարոտով կը մաշեին»[14]։

1880 թ. դոկտ. Ապտալյան (կյուրինցի), որ Ամերիկայում աստվածարանություն ուսած էր, ամերիկյան ներքին գործոց մինիստրության կողմե կը ղրկվի Թուրքիա՝ շերամաբույծ հայեր Ամերիկա գաղթեցնելու և Կալիֆորնիա նահանգի մեջ հաստատելու։ Կառավարությունը ներգաղթողներուն պիտի հատկացներ առանձին հողամաս մը, ուր անոնք պիտի հաստատեին ավան մը և իրենց ժամանակը պիտի հատկացնեին շերամարուծության մղում տալու։ Ավանի կառուցման և պիտույքներուն համար կառավարությունը որոշ բյուջե պիտի հատկացներ։ Այս հավաքական գաղթի լոիվ պայմանները ինձի անծանոթ են և դոկտ. Ապտալյան ալ որևէ տեղեկագրություն թողուցած չէ։ Քրիստաֆոր Գեորգյան, որ դոկտ. Ապտալյանի խումբի անդամներեն մին եղած է, իր տեղեկության մեջ կը հայտնե; որ կառավարությունը, դոկտ. Ապտալյանի հաղորդած հավաստումին համաձայն, Կալիֆորնիո մեջ իրենց պիտի հատկացներ հողամաս մը, հիմնելու գյուղ կամ ավան մը շերամ մշակելու համար։

1880 թ. դոկտ. Ապտալյան կը ժամանե Թուրքիա և կը դիմե Նիկոմեդիա, ուր կարող մետաքսամշակ հայ վարպետներ կային։ Ան Օրթա գյուղի և շրջակա հայ գյուղերուն և ավաններուն մեջ կը գտնե բողոքական 27 ընտանիքներ, որոնք համամիտ կը գտնվին Ամերիկա գաղթել։ Դոկտ. Ապտալյան անոնց կը հաղորդե, որ ամերիկյան կառավարությունը խոստացած է նավային փոխադրության և հարակից ծախսերը վճարել և իրենց հողամաս մը հատկացնել Կալիֆորնիո մեջ[15]։

Քրիստաֆոր Գեորգյան Ամերիկա գաղթող առաջին հայն է, որ գրի առած է իր հետ գաղթողներու մասին արժեքավոր տեղեկություններ։ Ան կը հայտնե, որ իրրև արդյունք վերոհիշյալ ընտանիքներու և դոկտ. Ապտալյանի միջև ծագած անհամաձայնության՝ դաղթել փափագող ընտանիքներու թիվը կը նվազի և ի վերջո կիջնե յոթի։ Խումբը կը բաղկանար 27 անձերե, որոնց մեջ, կըսե Գեորգյան, կային անվանի շերամարույծներ։

Այս յոթը ընտանիքները իրենց տունները, կահույքները, գործիքները կը ծախեն և, փոխադրվելով Պոլիս, կը սպասեն Ամերիկա մեկնող նավին։ Խումբի անդամները Պոլսի մեջ կը հանդիպին շարք մը նեղություններու. նավը կը կորսնցնեն, կը սպառեն իրենց խնայողության մեծ մասը և կը մատնվին տագնապի։ 1882 թ. այս խումբին մեկ մասը դոկտ. Ապտալյանի ընկերակցությամբ բառասուն հակ գրքերով և պիտույքներով կը մեկնի Ամերիկա, իսկ մյուս խումբը՝1884 թ.։

Գեորգյան կգրե. «1884-ին մեր խումբը դարձյալ ճամփա կելլե Պոլսեն հոլանդական նավով, որ Օդեսայեն կուգար, և մեջը կային ուրիշ երեք հայեր. մեկին անունը Պետրոս էր, մյուսինը Սարգիս (տիգրանակերտցի), իսկ երրորդն

[14] «Ամերիկահայ տարեցույց», 1912, էջ 169։
[15] «Պայծառ», Բոստոն, 1930, սեպտ. 24։

էր օրդուցի Թաթեոս Սերճանյան, որ ուսանելու կերթար և հետո եղավ բժիշկ...։ Նավապետը անգլիացի էր»։

Խումբը Ռոտերդամեն կմեկնի և հիսուն օրեն Նյու Յորք կը հասնի։ Այստեղ խումբը կը մատնվի անգործության և տնտեսական ճգնաժամի։ Ամերիկայի երկրագործության իշխանությունը կը մերժե որևէ օժանդակություն ցույց տալ, «...եվ որովհետև քիչվոր էինք կառավարությունը որևէ օժանդակություն չբերավ մեզի...»,—կը հայտնե Գեորգյան։ Նյու Յորքի մեջ զիրենք զիմավորող առաջին հայը եղած է Մինասյան անունով անձ մը։ Այս միջոցին Նյու Յորք գտնվող ուրիշ հայ մը, որ Թեքսասի մեջ հողի և անշարժ կալվածի գործակատարի մը հետ կապակցություն ունեցած է, կը համոզե այս գաղթականները որ մեկնին Թեքսաս, Պալեստին դավառը։ Գեորգյան իր հուշերուն մեջ ծանր լեզվով կը խոսի այս անձի մասին և զայն կանվանե «խարերա», որ պատճառ դարձած է ոմանց Թեքսաս մեկնելուն, անտանելի զրկանքներու ենթարկվելուն և մահանալուն։

Դոկտ. Ապտալյանի խումբը կը ճյուղավորվի։ Գեորգյանի քույրը, տիկին Պաղտասարյանը՝ կը մեկնի Աթոլրորո, Մասաչուզետս նահանգի ամերիկացի միսիոնների մը մոտ՝ սպասարկելու և սպասելու ամուսինի նպաստավոր լուրերուն։ Իր ամուսինը՝ Արթին Պաղտասարյան խումբին հետ կը մեկնի Թեքսաս։ Մինասյան այնպես կը կարդադրե, որ խումբը երկաթուղիով ձրի փոխադրվի։ Սենտ-Լուիսի մեջ խումբը երկուքի կը բաժնվի, Գեորգյան և ուրիշ հայեր կը մնան Սենտ-Լուիս։ 1884 թ. նոյեմբերի սկիզբը դոկտ. Ապտալյանի և Պաղտասարյանի մնացած խումբը կը հասնի Թեքսաս։ «...Այս եղանակին Թեքսասի օդը զով էր՝ հիանալի... Մայիս ամսուն էր որ զգացինք օդին ծանրությունը, իսկ ամառը անտանելի եղավ, ամբողջ խումբին անդամները հիվանդացան, այլևս իրարու խնամք չէինք կրնար տանել, ինչ որ ցանած էինք՝ խոտը ծածկեց, կարող չէինք խոտերը մաքրել և հող տանել։ Ջորավոր կազմով և հեղ բնավորությամբ սեամորթներ, որոնք բամբակամշակներ էին, եկան և ձրիարար մեզի օգնեցին։ Այդ ամառ մեր խումբեն մեռան Մարիամ տուտու Տոնիկյան, օրիորդ Տոնիկյան և չորս փոքրիկներ։ Առաջնորդնիս ալ ծանրապես հիվանդացավ, որուն հետևանքով շատ նեղվեցանք...։ Մեր մոտ գտնվող լիճեն, որուն ջուրը կը խմեինք, կոկորդիլոսներ ցամաք կելլեին, բայց անկնաս էին, իսկ օձերը մեր տուներուն մեջ կը պտտեին, անոնք ալ անվնաս էին, հարձակում չէին ըներ, բայց շատ զգույշ պետք է ըլլայինք կերակուրները լավ մը ծածկելու, որպեսզի չուտեին, և հավերուն հավկիթները անմիջապես հավաքելու էինք որպեսզի չկլլեին։ Ճանճերու և մժեղներու շատ խոշոր և մարդամոտ տեսակները բազում էին, մեր դեմքերը դերեզմանե փախչողներու դեմքերու փոխվեցան, մինչև որ սիրելի նոյեմբեր ամիսը եկավ...»։

Այս միջոցին խումբին առաջնորդը՝ դոկտ. Ապտալյան կովի մը հետևանքով Թեքսասեն կը փախչի, իսկ մնացած հայերն ալ լեզվին անտեղյակ և անօգնական վիճակի մեջ մնալով՝ կը մեկնին Մեքսիկոյի ծովածոցը, անկե ալ նավով 15 օր կը ճամբորդեն Միսիսիպի գետին վրա և կը հասնին Սենտ-Լուիս։ Այս մասին Գեորգյան կավելցնե. «Այս էր պատմությունը, որ պատմեց քեռայրս՝ Արթին Էֆենդի Պաղտասարյան (Թեքսաս մեկնող խումբի մասին)»[16]։

[16] Տե՛ս «Պայքար», 1930, սեպտ. 27։

Սենտ-Լուիսի մեջ խումբը կը հասատավի Ֆրանքլին փողոցի վրա անհարմար տան մը մեջ «որուն մեկ կողմը ախոռ էր,—կը գրէ Գեորգյան,—մյուս կողմը գինետուն, երեք հարկանի տան մը մեջ, մուխը ծուխը կը մթնցնեին... և ստիպված էինք ցորեկ ատենը լույս վառել...»։ Այստեղ ալ լեզվի անծանոթությունը և շարք մը նեղություններ դոկտ. Ասլտալյանի խումբի անդամները կը պաշարեն. ոմանք կը հաջողեն գործ գտնել և կը սկսին Ստեմպինկ գործարանին մեջ գործել ժամը տասը սենտի. «...տասը ժամ տաժանելի աշխատություն կը կատարեին շարաթական վեց դոլարով»,—կըսե Գեորգյան, իսկ Գեորգյանը փոքր ըլլալով կաշխատի ժամը հինգ սենտի։ «...Արթին էֆենդին երբ տուն կը դառնար դժվար էր զանազանել ճերմակ թե սև ցեղին պատկանելը...»։

Տեղական լեզվին բոլորովին անծանոթ էինք, բացի Հարություն Սեմերճյանեն և Գարեգինեն, որոնք քանի մը բառ կը խոսեին... Արթին էֆենդին օր մը հանդգնություն ունեցած էր շարաթականի հավելում խնդրել իր վերակացուեն, տրված պատասխանն այն եղավ, որ ունեցած գործն ալ կորսնցուց։ Իսկ դրացիներու տված նեղությունները շատ էին,—կը շարունակե Գեորգյան,—դրացիները մեր ենթադրությամբ գերմանացիներ էին, որոնք վայրագ ու կռվարար էին, և գրեթե ամեն օր կռիվ կունենային անոնց հետ և պատուհանները գոց կը պահեինք, որովհետև ազտեղությունները պատուհանեն ներս կը նետեին...»։ Գեորգյան կը պատմե խումբին կրած նեղություններն ու զրկանքները և տեղացիներու հետ ունեցած ընդհարումները և կավելացնե, որ տեղացիները իրենց «թուրք» կը կոչեին։

Գեորգյանի քույրը Աթոլրորոյեն կը մեկնի Սեն-Լուիս. բայց քաղաքը չսիրելով 1885 թ. դարձյալ կը փոխադրվի Աթոլրորո։ Հետո Գեորգյան և ուրիշներ ալ կը մեկնին Աթոլրորո։ «...Այս փոքր քաղաքին. Աթոլրորոյի մեջ էր որ գիտցանք և զգացինք, որ քաղաքակիրթ երկրի մը մեջ կը գտնվինք...»։

Գեորգյան հետևյալ ընդհանուր տեղեկությունները կը հաղորդե Բոստոնի և Նյու Ինգլենդի այն ատենվան հայ պանդուխտներու մասին. «1885-ին Բոստոնի մեջ կը գտնվեին հետևյալ հայերը. Հակոբ Պողիկյան՝ գորգի վաճառական, խարբերդցի, որ հետո օտարականի մը հետ ամուսնացավ, Ստեփան Նագաշյան, խարբերդցի, պղնձագործ, երկիրը նոր ամուսնացած և Ամերիկա մեկնած։ Խարբերդցի մեբենագործ Պոլ (Պողոս), որ հետո օտարականի մը հետ ամուսնացավ։ Թաթեոս Սերճանյան, օրդուցի, որ բժշկություն ուսանելու եկած էր, Հեճենյան անուն երիտասարդ մը... Պարույր Փեշտմալճյան, ուսանող մը, մեր ընտանիքը, Վարժապետյան և Գեորգյան։ Քսանի չափ հայեր ալ Ուստր կը գտնվեին և հոն երկաթաթելի գործարանը կաշխատեին։ 1887-ին Բոստոնի մեջ կային վեց հայ ընտանիք...»։ Անդրադառնալով Մասաչուզետսի մեջ բնակող հայերու ընկերային կյանքի մասին, Գեորգյան կը հայտնե, որ առաջին անգամ 1885 թ. Բոստոնի հայերը կը հիմնեն «Հայրենասիրական Միություն», որու կը միանան ինք, Վարժապետյան և անոր կինը[17]։

Շարունակելով առաջին ամերիկահայերու մասին մեր պրպտումները՝ կը գտնենք որ 1882 թ. Միացյալ Նահանգները ժամանած է նաև Ավետիս Նահիկյան, իր ուսումն ստացած Խարբերդի Եփրատ կոլեջը։ Քանի մը տարի Ամերիկա ապրելե հետո ան կը վերադառնա երկիր, բայց քառասուն օր մնալե հետո՝

[17] «Պայքար», 1930, անգլ. 28։

նորեն կը վերադառնա Ամերիկա։ Ավետիս Նահիկյան խիստ ընթերցասեր, պրպտող և ուսումնասիրող անձ մը եղած է։ Ան թողած է շարք մը ձեռագրեր։ Գրած է փոքրիկ գրքույկ մը՝ «Բաց նամակ առ Քրիստոս», որը հումորով լի տրտունջի գիր մըն է Քրիստոսին ուղղված։ Երկար տարիներով ապրած է Սենտ-Լուիս, մամուլի միջոցով անխոնջ պայքար մղած է կենդանիներու նկատմամբ գործադրված բիրտ և տմարդի վերաբերումին դեմ։ Իր սուր, խայթող լեզուն և բացատրությունները երկար տարիներ Սենտ-Լուիսի ոստիկանության գլխուն ուղղակի ահազանգ մը եղած է։[18]

Ավետիս Նահիկյանին ծանոթացա 1912 թ. Սենտ-Լուիսի իր գրավաճառատան մեջ։ «Շարունակ կը կարդամ և բնավ չեմ ձանձրանար»,—ըսավ ինձի։ Ընթերցանության և պրպտումներու հետևանքով լայնատարած հմտություն ամբարած էր, կղզիացած հանրագիտարան մըն էր և ջերմ հայրենասեր։ Խոսելու միջոցին նկատեցի, որ անաղարտ պահած էր Զորրորդ Հայքի (Խարբերդի) բարբառը, ոճերն ու ասույթները և իր մտքի պաշարն արտահայտելու համար կը փափաղեր ժամերով խոսել։ Նկատեցի միևնույն ատեն, որ ան իր միտքը կարտահայտեր սահուն հայերենով և խոսելու միջոցին բնավ անգլերեն կամ օտար բառեր չէր խառներ իր խոսքերուն։

Խաչատուր Նահիկյան՝ Ավետիս Նահիկյանի ազգականներեն մին, 1880 թ. կավարտե Եփրատ կոլեջը, մինչև 1885 թ. կը դասավանդե նույն հաստատության մեջ։ Այնուհետև կը մեկնի Ամերիկա, կը հետևի մաթեմատիկի, բնագիտության և աստղագիտության։ 1887 թ. վերջերը երկիր կը վերադառնա և կը պաշտոնավարե Եփրատ կոլեջին մեջ 35 տարի։ 1915 թ. հայկական տեղահանություններու և ջարդերու միջոցին 400-ե ավելի հայ մտավորականներու հետ կը նահատակվի ճանապարհին՝ Վարդապիլ և Փարչաճ գյուղերու մոտերը։

Հովհաննես Ռուսյան, որ այժմ կը բնակի Դետրոյտի մեջ, իր Ամերիկա գաղթելու մասին հետևյալ տեղեկությունները հաղորդեց. «1887 թվին ես Խարբերդեն մեկնեցա Ամերիկա, և նույն թվի օգոստոս 1-ին ուրիշ հայերու հետ հասանք Բոստոն, և ես մեկնեցա Ուստր։ Այն օրերուն խոսքի կարգ անցած էր, խարբերդցիները մինչև որ Ուստր քաղաքը չհասնեին, ինքզինքին Ամերիկա հասած չէին նկատեր, և երկիրը իրենց սիրելիներուն կը գրեին. «Սաղ սալամաթ եկանք Ամերիկայի Ուստր քաղաքն հասանք և երկաթաձեի գործարան գործ առինք»։ Ուստրի բնակչության մեծ մասը իրանտացիներ էին, մեզի «Թրրր» (Թուրք) կը կոչեին և մեզի շատ նեղություն կուտային։ Այն տուները, որ մեզի վարձու տված էին, շատ կեղտոտ էին և խոզերն անդամ անոնց մեջ չպիտի ուզեին բնակիլ։ Մեր ամենամեծ մտահոգությունը գործ գտնելն էր։ Պիրակի օրերը մենք պետք է ամերիկյան եկեղեցի երթայինք, կամ պատվելի Հիշկոկին ժողովարանը, որպեսզի իրրև «բարի քրիստոնյա» մեզի հանձնարարական մը տար գործատերերուն ներկայացնելու։ Ես հաջողեցա երկաթաձեի գործարանին մեջ գործ մը առնել, ուր ատեն մը գործեցի։ Ուսման ծարավս շատ մեծ էր... Գործս ձգեցի գացի Չիկագո, ժամանակ մըն ա։ այնտեղ գործեցի. միևնույն ատեն գպրոց ալ կերթայի։ Անկե մեկնեցա Միչիգանի Անն Հարբոր քաղաքը և իրրև ուսանող արձանագրվեցա Միչիգանի համալսարանը և հետևեցա քիմիագիտության։ Համալսարանն ավարտելե հետո իմ ճյուղիս մեջ աշխատած եմ շարք մը ամերիկյան ընկերություններու»։

---

[18] Այս տեղեկություններն ինձի հաղորդած են Նվարդ և Զարուհի Նահիկյան։

Հովհաննես Ռուսյան եղած է գեղարվեստասեր և ջերմ հայրենասեր հայ մը, իսկ տիկին Էլիս Ռուսյան՝ Զարրանելյանի գուստրը, ուսումն առած է Միացյալ Նահանգներու մեջ. իր երիտասարդական տարիներուն եղած է ջերմեռանդ հավատացող և եռանդուն պրոպագանդիստ մը ամերիկյան կիներու հավասար քվեարկության իրավունքին և շարժման։ Ան պատկանած է ամերիկյան կիներու քվետվության մարտական խումբին և իբրև դրոշակակիր մասնակցած է Բոստոնի, Նյու Յորքի, Վաշինգտոնի և Չիկագոյի բողոքի երթերուն։ Ան երկար տարիներով իբրև ուսուցչուհի դասավանդած է Ուստրի և այլ վարժարաններու մեջ։

Այդ տարիներուն պանդուխտ հայ մը այսպես կը նկարագրե ուստրաբնակ հայերուն կենցաղը. «Քսանե ավելի հայեր կը բնակեին Հանովր և Էլլեն փողոցներուն անկյունը գտնված տանը մեջ, միևնույն սենյակին մեջ եփելով, ուտելով և պառկելով։ Յուրաքանչյուր գործավոր ինքն իր ճաշը կը պատրաստեր, ամանները կը լվար, սենյակը կը մաքրեր, լվացքը կրներ, գոնե շաբաթը անգամ մը։ Երբ բարեկամի մը կայցելեինք՝ իր սենյակին մթնոլորտը ծխախոտի ծուխով և մոխիրով ու հոտերով ապականած էր, կեղտոտ անկողիններ, որոնց սավաններուն գույնը շատոնց հրաժեշտ տված էր ճերմակության, փոշի, լուցկիի կտորներ, սիկարի մասեր, ոսկորներ... սենյակին զարդը կը կազմեին»[19]։

Դարձյալ ուրիշ պանդուխտ մը, կյուրինցի Ժամկոչյան, որ անցյալին ապրած է Ուստր, ինձի անձամբ տվավ հետևյալ տեղեկությունները. «Երբ ես առաջին անգամ մտա Ուստրի երկաթաթելի գործարանը աշխատելու, գործը շատ ծանր էր, որմե շատ մարդիկ վնասված էին և կորսնցուցած իրենց թևը, մատները, ոտքը կամ կյանքը։ Հասարակ գործավորները կը ստանային շաբաթական 7,5 դոլար, բայց քիչ մը ավելի լավ գրել կարդալ գիտնալուս, անգլերեն խոսքեր ու բառեր գլորելուս համար ինձի 8,5 դոլար տվին, որը բացառիկ շաբաթական էր այն օրերուն։ Ոմանք, երբեմն, թելքաշի վրա գործգլուխ աշխատելով, օրական կը ստանային երկու-երեք դոլար, երբեմն՝ մինչև չորս դոլար։ Հայ պանդուխտները մեծ մասամբ Խարբերդի նահանգեն էին։ Գործ գտնելը հեշտ բան չէր՝ մանավանդ հայերուս համար։ Բոլորս ալ լեզու չէինք գիտեր, բայց նախանձախնդիր էինք գործ գտնելու և տևական գործելու։ Պետք է գիտնաս, որ պանդուխտները իրենց ետև թողուցած էին հայր, մայր, կին, զավակներ ու որը աղգականներ։ Մենք իրենց ապավենն էինք. բոլորն ալ օգնության կը սպասեին։ Երբ գործ ճարելը անհնար էր, անգործները գործարանի բոսերուն (գործատերերուն) նվերներ կտանեին, հաճախ կը դիմեին եկեղեցիներու երեցներուն կամ կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներուն։ Երբեմն դիմումներն հաջողությամբ կվերջանային։ Գործավորներու ընտրությունը կատարողը միստր Հոլն էր։ Առավոտ ժամը տասին կուգար, գործավորները կարգի կանգնած կը սպասեին, ան կը զններ գործավորները, անոնց բազուկները, ճիշտ այնպես, ինչպես մեկը ոչխար կընտրե, և կընտրեր հարմարները, իսկ մյուսները գլխիկոր ետ կը դառնային»։

1888 թ. Ամերիկա ժամանած է արմենականներու հատվածին առաջնորդ և հայրենասեր Մ. Փորթուգալյան։ Ան երկար տարիներով եղած է Մարսելի մեջ հրատարակվող «Արմենիա» թերթի խմբագիրը։ Այցելելով Ուստր, ան իր ելույթին մեջ թելադրած է հայ պանդուխտներուն՝ հիմնել «Կաճառ հայկա-

[19] «Ամերիկահայ տարեցույց», 1913, էջ 76։

կանը», որը հետո ուստարանակ հայերը կանվանեն «Կաճառ Հայկական Ուստրի լուսավորչական հայոց»։ «Կաճառի եռանդուն անդամներուն մեջ էին,—կըսե Տ. Հակոբ ք. Մխճյան,—Մ. Թոփանելյան, Հովհաննես Յաղճյան, Պաղտասար և Օհան Թաշճյան, մհտ. Հակոբ Ոստիկյան, Մ. Արոյան և այլն»։ Փորթուգալյան միաժամանակ կը քաջալերե, որ հայ պանդուխտները Ուստրի մեջ հիմնեն հայկական եկեղեցի մը։ Այդ եկեղեցիի հիմնումը կը սկսի 1888 թ.։ «Ջանը թափողներուն մեջ էին,—կըսե Մխճյան քահանան,—Մ. Թոփանելյան, պոլսահայ մը որ Ուստր հաստատված էր 1884 թ.»[20]։

Պետք է նշել, որ այդ միջոցին Առաքելական եկեղեցվո անդամներու և փորթաթիվ բողոքական հայերու միջև պայքար մը կար։ Երբ ուստրարնակ հայերը կը դիմեն Պոլսո հայոց պատրիարքին՝ ամերիկահայերու համար առաջնորդ մը ընտրելու խնդրանքով, պայքարը կը սկսի սրիլ։ Պատրիարքը Ուստրի հայերու դիմումին ընդառաջելով՝ Ամերիկայի հայոց թեմին համար առաջնորդ կընտրե Հովսեփ վարդապետ Սարաճյան։ Ան Ամերիկա կը ժամանե 1889 թ. հուլիս 25-ին և իսկույն կը դիմե աշխատանքի։

Եկեղեցիի կառուցումը օրակարգին առաջին տեղը կը գրավեր։ Այս առթիվ պայքարը կը սաստկանա։ Պատվելի Հիշկոկ, որ բողոքական հայերու քարոզիչն էր, և լուսավորչական հայերը եկեղեցի չունենալուն համար իր ժողովարանը կհաճախեին, սոսկալի կընդդիմանա Ուստրի մեջ հայկական եկեղեցի մը հիմնելուն։ Այս պայքարին մեջ Սայրուս Համլին կը միանա Հիշկոկին։ Երկու պատվելիներն ալ, որ Հայաստանի և Թուրքիո մեջ միսիոներներ եղած էին, կաշխատեին ձեռնարկը ձախողեցնելու։ Այս պայքարին մեջ մեծ դեր կը կատարե Մ. Թոփանելյան։ Ան ուժգին կը պախարակե Համլինը, վար առնելով անոր «քրիստոնեական» դիմակը։ Ի վերջո իրավարան Հասկել (ծագումով իրլանտացի մը) կստանձնե հայոց եկեղեցի կառուցանելու դատը, և երբ ստանձնած էր՝ դատավորը ի նպաստ հայերու վճիռ կկայացնե, Հասկել իր անունով հող կը գնե և կը փոխանցե հայկական եկեղեցվո անդամներուն[21]։

Մինաս Մ. Ջամանիկյան (Խարբերդի Հյուսեյնիկ գյուղեն) ինձի տվավ հետևյալ տեղեկությունը. «Ես Ամերիկա եկա 1890 թ., այժմ 85 տարեկան եմ, 1890 թ. Ամերիկայի մեջ կային 2000-ե ավելի հայեր, որոնք կը բնակեին Ուստր, Բոստոն, Ունսակեպ, Պրովիդենս, Բրոքթոն, Քեմբրիջ, Աթոլբորո, Նյու Յորք, Նյու Ջերսի, Ուեստ Հորոբրն և ուրիշ քաղաքներ։ Միայն Ուստրի մեջ կապրեին մոտ 350 հայեր»։

* * *

Հայկական մեծ կոտորածները կարագացնեն արտագաղթի թափը։ Նոր գաղթականներու մոտ քառասուն տոկոսը գաղթած է Խարբերդի նահանգեն։ Մյուս գաղթականները պանդխտած են առհասարակ Արևմտահայաստանի հայկական նահանգներեն, հետո՝ Թուրքիո ծովեզերյա քաղաքներեն, Կիլիկիայեն, Եվրոպական Թուրքիայեն։ Մաս մըն ալ Կովկասի Ալեքսանդրապոլ քաղաքեն (այժմ Լենինական) և ուրիշ շրջաններե։ Արտագաղթողներու մեծագույն տոկոսը կը կազմեն Հայաստանի հողամշակները, քաղաքներու և ավաններու արհեստավորներն ու բանվորները։

[20] «Հուշամատյան», էջ 14—26։

[21] Այս տեղեկությունը ինձի հաղորդած է Հովհաննես Թուսյան, որ այդ թվականներուն Ուստր ապրած է և տեղյակ այս խնդրին։

Ամերիկահայ առաջին գաղթականներուն կազմությունը ուսումնասիրելով, հանդած եմ հետևյալ եզրակացության. 1610—1612 թթ. մինչև 1820 թ. եղած է մոտ 100 անձ (այդ տարիներուն գաղթականներու մուտքի արձանագրություն գոյություն չուներ), 1820—1865 թթ.՝ մոտ 400 անձ, իսկ 1865—1890 թթ.՝ մոտ 2000 անձ։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В АМЕРИКЕ

Н. Л. МАНКУНИ (Мичиган, США)

(Резюме)

Историю переселения армян в Америку можно разделить на два этапа: от начала XVII в. до 1890 г. и последующий период.

В первый период в Америку переселилось сравнительно мало армян; их общее число составляет около 2000 человек. Первым переселенцем, по всей вероятности, был «армянин Мартын» Martin the Armenian, который в протоколах Виргинского общества признается как выходец из Армении, переселившийся в Америку ок. 1610—1612 гг. Причины его переселения нам не известны. Настоящая история переселения армян в Америку начинается с момента прибытия двух армян, специалистов по шелководству, которых в 1653—1654 гг. англичанин Эдуард Дикс приглашает из Турции для руководства своим предприятием по разведению шелковичных червей.

Следует подчеркнуть, что армяне-переселенцы первого периода не были так называемыми «договорными переселенцами», какими являлась большая часть переселенцев из других стран начиная с XVII в., а сами оплачивали все расходы, связанные с их переездом. Они были выходцами, главным образом, из приморских городов Турции, а также внутренних областей Армении, являясь в подавляющем большинстве специалистами-шелководами, ремесленниками и торговцами, а также представителями интеллигенции. В переселенческом движении армян в Америку в первый период определенная роль принадлежит американским миссионерам, обосновавшимся в Турции до 1819 г.

Во второй период в Америку переселилось значительно больше армян. Организованная султаном Абдул Гамидом в 1895 г. резня армян, кровавые события в Киликии, а также массовые избиения и переселения армян в годы первой мировой войны и после нее не только опустошили всю Западную Армению, но и значительно способствовали переселению армян в другие страны, в том числе и в Америку.

Большая часть армян в США является выходцами из областей Западной Армении (особенно из Харбертского вилайета), Киликии и приморских городов Турции.